**«ԷՌ-Մաքս» (R-Max) ծառայությունների փաթեթի պայմաններ**

**«ԷՌ-Մաքս**»-ը ծառայությունների փաթեթ է, որի **«ԷՌ-Մաքս 6500» , «ԷՌ-Մաքս 7900», «ԷՌ-Մաքս 8500» և «ԷՌ-Մաքս 8500 Մարզային»** սակագնային փաթեթների կազմում ներառված է երկու ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ» և «Սմարթ հեռուստատեսություն», **«ԷՌ-Մաքս 10500», «ԷՌ-Մաքս 12900» և «ԷՌ-Մաքս 16900»** սակագնային փաթեթների կազմում ներառված է երեք ծառայություն՝ «Լայնաշերտ ինտերնետ», «Սմարթ հեռուստատեսություն» և «Ֆիքսված հեռախոսակապ»[1]:

**Աղյուսակ 1. «ԷՌ-Մաքս» [2] ծառայությունների փաթեթի գնացուցակ**

| Ծառայությունների փաթեթ ԷՌ-Մաքս | ԷՌ-Մաքս 6500[3] | ԷՌ-Մաքս 7900 | ԷՌ-Մաքս 8500 | ԷՌ-Մաքս 8500 Մարզային |
|---|---|---|---|---|
| Ինտերնետի արագություն անժամկետ բաժանորդագրության դեպքում | 100 Մբ/վ | 100 Մբ/վ | 150 Մբ/վ | 150 Մբ/վ |
| Ներառված հեռուստաալիքների քանակ անժամկետ բաժանորդագրության դեպքում | առնվազն 70 | առնվազն 98 | առնվազն 134 | առնվազն 182 |
| Հեռուստատեսային փաթեթներ եվ ֆիլմեր | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի |
| Մինչև հինգ էկրան միացնելու հնարավորություն | ներառված | ներառված | ներառված | ներառված |
| Հավելյալ սմարթ սարքի վարձակալություն | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի |
| Հավելյալ ծառյություն «Տուրբո»[4] | հասանելի | հասանելի | հասանելի | ներառված |
| Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն | 3 օր | 3 օր | 3 օր | 3 օր |
| Առանձին հեռուստաալիքներ | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի |
| Թեմատիկ փաթեթներ | հասանելի | հասանելի | հասանելի | հասանելի |
| Wi-Fi Սարք (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ)[5] | ներառված | ներառված | ներառված | ներառված |
| **Ամսավճար** | **8500 դրամ** | **7900 դրամ** | **8500 դրամ** | **8500 դրամ** |

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

| Ծառայությունների փաթեթ ԷՌ-Մաքս | ԷՌ-Մաքս 10500 | ԷՌ-Մաքս 12900 | ԷՌ-Մաքս 16900 |
|---|---|---|---|
| Ինտերնետի արագություն | 300 Մբ/վ | 500 Մբ/վ | 800 Մբ/վ |
| Ներառված հեռուստաալիքների քանակ[6] | առնվազն 182 | առնվազն 182 | առնվազն 182 |
| Անվճար րոպեներ ցանցի ներսում | 500 | 500 | 700 |
| Անվճար րոպեներ դեպի տեղական այլ ֆիսված ցանցեր | 200 | 200 | 300 |
| Հեռուստատեսային փաթեթներ եվ ֆիլմեր[7] | Օնլայն կինոթատրոն Wink | More.tv | Wink +More TV |
| Մինչև հինգ էկրան միացնելու հնարավորություն | ներառված | ներառված | ներառված |
| Հավելյալ սմարթ սարքի վարձակալություն | հասանելի | հասանելի | հասանելի |
| Հավելյալ ծառյություն «Տուրբո»[8] | ներառված | ներառված | ներառված |

[1] «ԷՌ-Մաքս 10500», «ԷՌ-Մաքս 12900» և «ԷՌ-Մաքս 16900» սակագնային փաթեթներով սահմանված հեռախոսակապի ծառայության պայմանները (տվյալ փաթեթների համար սահմանված ելքային զանգերի սակագները և «ԷՌ-Մաքս 10500», «ԷՌ-Մաքս 12900» և «ԷՌ-Մաքս 16900» սակագնային փաթեթներով չսահմանված պայմանները) համընկնում են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ գլխավոր տնօրենի և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենի 26.02.16թ. 006-02/16-Հ3-Լ համատեղ հրամանով սահմանված «Ֆիքսլայն» սակագնային փաթեթի պայմանների հետ:

[2] «Ռ-Մաքս» ծառայությունների փաթեթի ալիքները հաստատուն չեն և կարող են փոփոխվել Օպերատորի կողմից ցանկացած պահի:

[3] «ԷՌ-Մաքս 6500» սակագնային փաթեթը հասանելի է միայն Գյումրի և Ալավերդի քաղաքներում:

[4] «Տուրբո» ծառայությունը մատուցվում է բաժանորդի ընտրությամբ, այինքն անկախ այն բանից «Տուրբո» ծառայությունը ներառված է թե հասանելի տվյալ սակագնային փաթեթի շրջանակում, վերջինս տրամադրվում է բացառապես Բաժանորդի ցանկությամբ: Եթե բաժանորդը չի ցանկանում ակտիվացնել «Տուրբո» ծառայությունը, այն չի ակտիվանում, և համապատասխանաբար «TurboSpeed AX1800» սարքը չի տեղադրվում բաժանորդային հասցեում:

[5] Օպերատորի և Բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

[6]«ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթում ներառված հեռուստաալիքների ցանկը սահմանվում է սույն հրամանի Հավելված 2-ով:

[7] Հեռուստատեսային փաթեթների եվ ֆիլմերի կազմը և գնացուցակը սահմանվում էն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ գլխավոր տնօրենի և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենի թիվ 053-12-2023-Հ5-Լ հրամանով:

| | | | |
|---|---|---|---|
| Նախկին հաղորդումներ (TV on Demand) ծառայության տևողություն | 3 օր | 3 օր | 3 օր |
| Առանձին հեռուստաալիքներ | հասանելի | հասանելի | հասանելի |
| Թեմատիկ փաթեթներ | հասանելի | հասանելի | հասանելի |
| Wi-Fi Սարք (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) | ներառված | ներառված | ներառված |
| **Ամսավճար** | **10500 դրամ** | **12900 դրամ** | **16900 դրամ** |

Գները ներկայացված են ՀՀ դրամով և ներառում են ԱԱՀ:

1.1. Սույն պայմանների կետ 1-ում սահմանված **«ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի շրջանակում ի լրումն Աղյուսակ 1-ի** Բաժանորդը ստանում է **50% (հիսուն) զեղչ 1 (մեկ) ամսվա ամսավճարի համար**, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայությունները առաջին ամսվա ընթացքում տրամադրվում է 50% զեղչով, եթե վաճառքը իրականացվում է բացառապես Օնլայն բաժանորդագրության միջոցով: Մնացած այլ ուղղությունների միջոցով վաճառք իրականացնելիս սույն կետով սահմանված **50% (հիսուն) զեղչ 1 (մեկ) ամսվա ամսավճարների համար** պայմանը չի գործում:[9]

1.2. Սույն պայմանների կետ 1-ի 1.1. ենթակետերով **50% (հիսուն) զեղչ 1 (մեկ) ամսվա ամսավճարի համար** պայմանները չեն կիրառվում Աղյուսակ 1-ում սահմանված **«ԷՌ-Մաքս 6500»** սակագնային փաթեթի համար:

1.3. Եթե Բաժանորդը սույն պայմաններով սահմանված Ծառայությունների՝ 50% զեղչով տրամադրման ժամանակահատվածում կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է՝ 50% զեղչով օգտվել նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայություններից մինչև դրանց՝ 50% զեղչով տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը: Սույն կետում նշված ժամանակահատվածում «Մոնո 4500», «ԷՌ-Մաքս 6500», «Սմարթ» կամ «Ֆիքսլայն» սակագնային փաթեթներին անցման դեպքում Բաժանորդը դադարում է Ծառայություններից օգտվել՝ 50% զեղչով:

1.4. Եթե Բաժանորդը անցում է կատարում «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի այն սակագնային փաթեթից, որտեղ ներառված է «Տուրբո» ծառայությունը մեկ այլ սակագնային փաթեթի, որտեղ «Տուրբո» ծառայությունը ներառված չէ, ապա «Տուրբո» ծառայության համար սահմանված ամսավճարը սկսում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում՝ անցումը կատարելու պահից սկսած ավտոմատ կերպով: Այս դեպքում բաժանորդն իրավունք ունի հրաժարվել «Տուրբո» ծառայությունից: Եթե բաժանորդը հրաժարվում է «Տուրբո» ծառայությունից, ապա TurboSpeed AX1800 սարքը ապամոնտաժվում է Բաժանորդի բնակարանից՝ ըստ Օպերատորի կողմից սահմանված ընթացակարգի:

1.5. Եթե Բաժանորդը անցում է կատարում «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթից, որտեղ ներառված չէ «Տուրբո» ծառայությունը մեկ այլ սակագնային փաթեթի, որտեղ «Տուրբո» ծառայությունը ներառված է, ապա «Տուրբո» ծառայության համար սահմանված ամսավճարը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում՝ անցումը կատարելու պահից սկսած ավտոմատ կերպով:

1.6. Բաժանորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվել «Տուրբո» ծառայությունից: Այդ դեպքում Օպերատորը ապամոնտաժում է TurboSpeed AX1800 սարքը Բաժանորդային հասցեից և ծառայության համար սահմանված ամսավճարը դադարում է գործել Բաժանորդի սակագնային փաթեթի շրջանակում:

1.7. Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Բաժանորդային պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում TurboSpeed AX1800 Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

2. Եթե գործող ժամկետային պայմանագրով Բաժանորդը անցում է կատարում սույն հրամանով սահմանված **«ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի** ապա տվյալ դեպքում Բաժանորդը դադարում է ստանալ նախկին սակագնային/ծառայությունների փաթեթով սահմանված պայմանները և սկսում է ստանալ նոր սակագնային/ծառայությունների փաթեթով սահմանված պայմանները, սակայն Բաժանորդը շարունակում է օգտվել նոր սակագնային/ծառայությունների փաթեթից պարտադիր տարեկան բաժանորդագրության պայմանով մինչև դրա համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը:

2.1. Սույն պայմաններով սահմանված «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի շրջանակում սակագնային փաթեթների փոփոխությունները իրականացվում են հետևյալ սկզբունքով՝ Բաժանորդը անցում կատարելով «ԷՌ-Մաքս» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի դադարում է

---

[8] «Տուրբո» ծառայությունը մատուցվում է բաժանորդի ընտրությամբ, այինքն անկախ այն բանից «Տուրբո» ծառայությունը ներառված է թե հասանելի տվյալ սակագնային փաթեթի շրջանակում, վերջինս տրամադրվում է բացառապես Բաժանորդի ցանկությամբ: Եթե բաժանորդը չի ցանկանում ակտիվացնել «Տուրբո» ծառայությունը, այն չի ակտիվանում, և համապատասխանաբար «TurboSpeed AX1800» սարքը չի տեղադրվում բաժանորդային հասցեում:

[9] Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար:

ստանալ հին սակագնային փաթեթով սահմանված պայմանները և սկսում է ստանալ նոր սակագնային փաթեթով սահմանված պայմանները։

**3. Հեռուստատեսության ծառայության տրամադրման եղանակներ**

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից համատեղ մատուցվող հեռուստատեսության ծառայությունները տրամադրվում են «Սմարթ ՕԹիԹի (OTT) հեռուստատեսություն» եղանակներով: «Սմարթ ՕԹիԹի (OTT) հեռուստատեսություն» տեխնոլոգիայով ծառայության մատուցման համար բացվում է «Սմարթ ՕԹիԹի (OTT) հեռուստատեսություն» բաժանորդային հաշիվ, որի դեպքում հեռուստատեսության ծառայությունները տրամադրվում են յունիքաստ տեխնոլոգիայով:

**4. Այլ պայմաններ**

4.1. Սույն պայմանների պայմաններով սահմանված ծառայությունների դիմաց վճարումը կատարվելու է հետվճարային համակարգով:

4.2. Սույն պայմանների պայմաններով սահմանված ծառայությունները մատուցվում Switron i12 Սարքերի միջոցով:

4.3. Switron i12 հեռուստատեսային սարքավորումը տրամադրվում է օգտագործման իրավունքով մինչև բաժանորդագրության ավարտը:
Եթե Բաժանորդին տրամադրված Switron i12 մոդելի սարքը վնասվել (վնասվածքը չի հանդիսանում Switron i12 մոդելի սարքի գործարանային թերության հետևանք) կամ կորել է, ապա Բաժանորդը պարտավոր է վճարել Օպերատորին 30,000 (երեսուն հազար) դրամի չափով տուգանք:

4.4. Բոլոր նշված ծառայությունները՝ Անվանափոխություն, Հասցեի փոփոխություն, Սարքի փոխարինման/Wi-Fi ակտիվացման ծառայություն, Ներբնակարանային/ներգրասենյակային տեխնիկական սպասարկման ծառայություն, Ստատիկ IP հասցե, Հաշվի վերծանում, Հեռախոսահամարի փոփոխություն, Գեղեցիկ հեռախոսահամարի ընտրություն, «TurboSpeed AX1800» սարքի տրամադրման պայմանները, «TurboSpeed AX1800 Cube» սարքի տրամադրման պայմանները, Վճարման և ծառայությունների անջատման կարգ, Սարքավորումների վերադարձման փոխհատուցում, Լարանցման ծառայություն տրամադրվում են համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների 2015 թվականի օգոստոսի 14-ին ստորագրված թիվ 017-08/15-Հ5-Լ պայմանների Հավելված 2-ով սահմանված պայմանների:

4.5. Ժամանակավոր կասեցում ծառայությունը տրամադրվում է՝ համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների թիվ 032-06-2017-Հ5-Լ պայմաններով սահմանված «Ժամանակավոր կասեցում» ծառայության պայմանների:

4.6. Բոլոր այն Բաժանորդները, ովքեր միացել են **«Սմարթ» և «Էռ-Մաքս» սակագնային/ծառայությունների փաթեթներին** համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների կողմից 2015 թվականի օգոստոսի 14-ին ստորագրված թիվ 018-08/15-Հ5-Լ պայմաններով սահմանված պայմանների և կկատարեն սակագնային փաթեթի փոփոխություն **նույն Ծառայության շրջանակում**՝

- «Սմարթ 4000», «Սմարթ 8500» սակագնային փաթեթների միջև սակագնի փոփոխություն,
- «ԷՌ-Մաքս 6500», «ԷՌ-Մաքս 7500», «ԷՌ-Մաքս 8500» սակագնային փաթեթներ միջև սակագնի փոփոխություն,
- «ԷՌ-Մաքս 10000», «ԷՌ-Մաքս 12500» և «ԷՌ-Մաքս 20000» սակագնային փաթեթներ միջև սակագնի փոփոխություն,

Կշարունակեն օգտվել «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների կողմից 2015 թվականի օգոստոսի 14-ին ստորագրված թիվ 018-08/15-Հ5-Լ պայմաններով սահմանված պայմաններից:

4.7. Բոլոր այն Բաժանորդները, ովքեր միացել են **«Սմարթ» և «Էռ-Մաքս» սակագնային/ծառայությունների փաթեթներին** համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների կողմից 2015 թվականի օգոստոսի 14-ին ստորագրված թիվ 018-08/15-Հ5-Լ պայմաններով սահմանված պայմանների և կկատարեն սակագնային փաթեթի փոփոխություն անցում կատարելով **մեկ այլ Ծառայության օրինակ**՝

- «Սմարթ 4000», «Սմարթ 8500» սակագնային փաթեթներից անցում «Էռ-Մաքս» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի,
- «Էռ-Մաքս» ծառայությունների փաթեթից անցում «Սմարթ 4000», «Սմարթ 8500» սակագնային փաթեթներից որևէ մեկին,
- «ԷՌ-Մաքս 6500», «ԷՌ-Մաքս 7500», «ԷՌ-Մաքս 8500» սակագնային փաթեթներից անցում «ԷՌ-Մաքս 10000», «ԷՌ-Մաքս 12500» և «ԷՌ-Մաքս 20000» սակագնային փաթեթներին,
- «ԷՌ-Մաքս 10000», «ԷՌ-Մաքս 12500» և «ԷՌ-Մաքս 20000» սակագնային փաթեթներից անցում «ԷՌ-Մաքս 6500», «ԷՌ-Մաքս 7500», «ԷՌ-Մաքս 8500» սակագնային փաթեթների,

Կդադարեն օգտվել «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների կողմից 2015 թվականի օգոստոսի 14-ին ստորագրված թիվ 018-08/15-Հ5-Լ պայմաններով սահմանված պայմաններից և կսկսեն օգտվել սույն պայմաններով սահմանված **«Սմարթ» և «Էռ-Մաքս»** սակագնային/ծառայությունների փաթեթների պայմաններից

4.8. Բոլոր այն Բաժանորդները, ովքեր միացել են **«Սմարթ» և «Էռ-Մաքս» սակագնային/ծառայությունների փաթեթներին** համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների կողմից 2015 թվականի

օգոստոսի 14-ին ստորագրված թիվ 018-08/15-Հ5-Լ պայմաններով սահմանված պայմանների հնարավորություն ունեն անցում կատարելու սույն պայմաններով սահմանված **«Սմարթ» և «Էռ-Մաքս»** սակագնային/ծառայությունների փաթեթներին և ստանալու սույն պայմաններով սահմանված պայմանները։